# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ՁՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/02 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ձորաքար

«17» օգոստոսի 2021թ.
ժ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Սարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 17-ին՝ ժամը 13:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը:

| հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | Ք. Երևան, Մամիկոնյանց 24/2 |

3. Մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են:
4. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | Համապատասխանում է |

Մասնակիցների գնային առաջարկը՝ ՀՀ դրամով
Ձորաքար համայնքի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | 72155820 | 60000000 | 12000000 | 72000000 |

5. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա և հայտ ներկայացրած մասնակիցը ներկա էր հայտերի բացման նիստին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիսում կազմակերպել գների նվազեցման շուրջ բանակցություններ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ:

Բանակցության արդյունքում «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ն չվերանայեց հայտով ներկայացված գնային առաջարկը և թողեց անփոփոխ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ չսահմանելով:

Ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթաց՝ սույն հայտարարությունը հրապարակելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, գ. Զոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Նախագահ՝ ____________________ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ ____________________ Պ. Սարիբեկյան

____________________ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ ____________________ Ժ. Խաչատրյան